ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ - 2017

«Վրաստան» թերթը եւս մեկ անգամ շնորհավորում է հասուն կյանքի շեմը հատող երկրի հանրային դպրոցների շրջանավարտներին, մաղթում նվաճումներ՝ ի փառս հայրենիքի, ցանկանում, որ ձեզանից յուրաքանչյուրն իր կարողություն-ունակություններով պետության արժանի ու օրինավոր քաղաքացի դառնա, շենացնի իր երկիրը, եւ սկսի դա հենց այն ծագ-անկյունից, ուր ծնվել եւ, որից սնունդ է առել:

Թերթի նախորդ համարում, մենք անդրադարձանք Վրաստանի մայրաքաղաքի, ինչպես եւ երկրի տարածաշրջանների հայկական դպրոցներում հնչած «Վերջին զանգի» հանդիսավոր արարողություններին ու տեղի աշակերտության նվաճումներին: Այսօր, ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Ծալկայի, Մառնեուլիի, Բոլնիսիի, Ասպինձայի հայկական դպրոցներում «Վերջին զանգն» ազդարարող միջոցառումների լուսաբանումն ու ներկա պահին շրջանավարտ-նորեկների վիճակագրությունը:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԹԻՎ 1 ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ՝ 11 ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ԵՎ 25 ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻ

Մայիսյան գարնանային այդ պայծառ օրը տոնական տրամադրությամբ էր համակված Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի թիվ 1 հայկական հանրային դպրոցը:

Բոլորը հավաքվել էին դպրոցի բակում՝ մասնակցելու արդեն ավանդույթ դարձած «Վերջին զանգ» ավարտական հանդեսին: Այստեղ էին նաեւ դպրոցի աշակերտները, մանկավարժները, բազմաթիվ ծնողներ եւ հյուրեր: Իսկ տասներկու դպրոցական գարուն բոլորած տասնմեկ շրջանավարտներ՝ դասղեկ Մարգարիտա Նարինյանի գլխավորությամբ, խորին հուզմունքով ու սրտի թրթիռով, հուզմունալից ասմունքով, երգով ու պարով, իրենց հոգու եւ սրտի խոսքն ասացին սիրելի ուուցիչներին ու հարազատ դպրոցին: Այնուհետեւ, շնորհավորանքի խոսքով շրջանավարտներին է դիմում դպրոցի տնօրեն Արտուշ Ուռումյանը՝ նրանց ցանկանալով բոլոր նվիրական երազանքների իրականացում:

Այս տարվա շրջանավարտները դպրոցի պատմության մեջ 79-րդն են:

Շրջանավարտներից յոթը գրանցվել են մասնակցելու միասնական քննություններին եւ համալրելու Թբիլիսիի տարբեր բուհերում սովորող շահումյանցի ուսանողների շարքերը:

Բարի՜ երթ ձեզ, սիրելի շրջանավարտներ, հանգիստ քայլեք կյանքի ճափաներով, քանի որ ձեզ փոխարինելու են մեր դպրոցի 25 առաջին դասարանցիներ:

ՆԵԼԼԻ ՉՈԲԱՆՅԱՆ
Դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ՕՐ, ՈՐՆ ԻՐ ՈՂՋ ՀՄԱՅՔՈՎ ԱՌՀԱՎԵՏ ԱՊՐԵԼՈՒ Է ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ես դեռ աշակերտ եմ, ծնողներս՝ մանկավարժ: Ահա արդեն տասնմեկ տարի ականատեսն եմ դառնում նրա, թե ինչպես յուրաքանչյուր տարի սրտի նույն տրոփյունով, հույս ու հավատով մանկավարժ ծնողներս հրաժեշտ են տալիս իրենց հերթական շրջանավարտներին: Ու հավատացեք, նույն բերկրանքն են ապրում, ինչ ծնողը կարող է վերապրել սեփական զավակին կյանքի նոր ու առավել լուրջ, դժվար փուլ ճանապարհելիս...

Ասվածիս ապացույցն է՝ նաեւ այս տարին, երբ հայրենի գյուղս՝ Օզնին, իր ողջ բնակչությամբ, ճանապարհում էր դպրոցն ավարտող 8 աշակերտի: Օրը տոնական էր մունիցիպալիտետի մյուս տասը հայկական հանրային դպրոցներում եւս: Այստեղից երկուսը ներկա դրությամբ ընդգրկված են օպտիմալիզացիայի ծրագրում, որի հետեւանքով Այազմա գյուղի բնակիչները հաճախում են Նարդեւանի, իսկ Ղաբուր գյուղի աշակերտությունը՝ Խաչգյուղի հանրային դպրոցներ:

Մունիցիպալիտետի հայկական դպրոցների շրջանավարտների ընդհանուր թիվը 81 է. Նարդեւանի դպրոցում 2016/2017 ուստարին ավարտում է 23, Աշխալայի՝ 11, Ղզլքիլիսայի՝ 11, Օզնիի՝ 8, Խաչգյուղի՝ 7, Ղուշչիի՝ 7, Չիվքքիլիսայի՝ 5, Դարագյուղի՝ 5, Բուռնաշեթի՝ 4:

Ուրախությամբ պետք է հայտնենք, որ այս տարի Ծալկայի հայ շրջանավարտներից 3-ը ոսկե (Նարդեւան, Դարագյուղ եւ Չիվքքիլիսա) եւ 5-ը արծաթե (Չիվքքիլիսա, Դարագյուղ եւ Ղզլքիլիսա) մեդալների հավակնորդ են: Ողջունելի է նաեւ՝ մունիցիպալիտետում վերջին հինգ-վեց տարիներին գրանցվող այն փաստը, որ շրջանավարտների գերակշիռ մասն իր բարձրագույն ուսումը ցանկանում է շարունակել Վրաստանի բուհերում: Վրացական բուհ ընդունվելու ցանկությանը մեծապես նպաստում եւ օգնում է արդեն մի քանի տարի գործող «1+4» ծրագիրը, որի շրջանակներում ոչ վրացական դպրոցի շրջանավարտը եւ ապա, վրացական բուհն ավարտած ուսուցիչը, իրավաբանը, բժիշկն ու գյուղատնտեսը առավել մեծ հավանականությամբ են վերադառնում հայրենի գյուղ եւ հենց իրենց ծննդավայրում դրսեւորում ու կատարելագործում մասնագիտական իրենց ունակությունները:

Բարի երթ մաղթելով բարձրադիր Ծալկայի մեր բոլոր շրջանավարտներին, հավելեմ, որ արդեն 2017/2018 ուսումնական տարում մունիցիպալիտետի հայկական դպրոցներում միջնակարգ իրենց ուսումը կսկսեն 80 առաջին դասարանցիներ: Թեեւ հույսն ու ցանկությունը մեծ են, որ հետագա տարիներին այս թիվն է՛լ առավել կաճի ու կկրկնապատկվի:

ԱՆԱՀԻՏ ՀԱՆԵՍՅԱՆ
Ծալկայի մունիցիպալիտետի Օզնի գյուղի 11-րդ դասարանի աշակերտուհի

ԱՄԵՆ ԱՎԱՐՏ ՄԻ ՆՈՐ ՍԿԻԶԲ Է...

Դամալայի հանրային դպրոցի բակում տոն էր՝ «Վերջին զանգի» ավանդական հանդիսությունը, որ կրկնվում է յուրաքանչյուր տարի, սակայն միշտ ինքնատիպ, յուրովի ու հիշարժան: Դպրոցական ուսումնառության ավարտը խորհրդանշող «Վերջին զանգն» ուներ հրաշալի խորհուրդ՝ այն առաջնորդում էր դեպի նոր ու մեծ կյանք, դեպի ինքնադրսեւորման եւ ինքնահաստատման լայն ասպարեզներ: Շրջանավարտները հրաժեշտ էին տալիս կյանքի առաջին՝ մանկական ու պատանեկան փուլին, հարազատ դարձած դպրոցին ու ուսուցիչներին... Յուրաքանչյուրը նոր կյանք է մտնում որպես երազանքներով լի անհատ:

Այդ օրը ծիծաղն ու արցունքը միախառնվել էին իրար: Հնչում էին երգեր, պարեր, երգ ու պարին միախառնվել էին բարեմաղթանքները, բա-

ռեմաղթում էին նաեւ առաջին դասարանցիները:

Շրջանավարտներին «Վերջին զանգի» կապակցությամբ շնորհավորելիս՝ բարեմաղթանքի խոսքեր հղեցին մունիցիպալիտետի Կրթական ռեսուս-կենտրոնի վարիչ Տրիստան Մուրադաշվիլին, 12-րդ դասարանի դասղեկ Անաստաս Գրիգորյանը: Դպրոցի տնօրեն Նելլի Դուդուկչյանը, շնորհավորելով 23 շրջանավարտի՝ մեծ կյանք ոտք դնելու կապակցությամբ, բարեմաղթեց նրանց կյանքի կանաչ ճանապարհ եւ երազանքների իրականացում: Առանձնահատուկ ուրախությամբ եւ հպարտությամբ բարձրաձայնվեց այն մասին, որ դպրոցի այս տարվա շրջանավարտներ Կարեն Քերոբյանը, Մարինե Սաղաթելյանը արժանացել են ոսկե մեդալի, իսկ Սյուզաննա Փրթավյանը, Վահագն Սաղաթելյանը, Վալյա Պետրոսյանը՝ արծաթե մեդալի:

Հավաքվածներն այդ օրը շնորհավորեցին այն 19 փոքրիկ առաջին դասարանցիներին, ովքեր առաջին անգամ են ոտք դնելու դպրոցի շեմ՝ նրանց մաղթելով առողջություն, խաղաղ եւ արդյունավետ ուսումնական տարի:

Իսկ երկու օր առաջ, Դամալայի հանրային դպրոցում, տոնական զարդարված հանդիսությունների դահլիճում, առաջին դասարանի դասվար Ծովինար Ֆարմանյանի եռանդուն աշխատանքի շնորհիվ՝ տեղի ունեցավ «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումը:

ՆԻՆԱ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ
Հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի գ.Դամալա, Ասպինձայի մունիցիպալիտետ

ՆՐԱՆՔ ԿԱՐԴԱՐԱԺՆԵՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒ ԾՆՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ

Հիշո՞ւմ եք, երեւանցի հայտնի երգիչ մեր սիրելի Թաթայի երգը՝ «Փուչիկներ, ծաղիկներ, արցունքներ, տոնական համերգ ու սեղան...»: Կարծես թե այդ երգը հատուկ «Վերջի զանգին» է նվիրված: Մեր գյուղում ամեն ինչ անցավ ըստ ավանդույթի եւ մեզանում ու ամենուր ձեւավորված մշակույթի շրջանակներում:

Մառնեուլիի շրջանի Միրզոեւկա գյուղի մեր դպրոցն էլ զարդարված էր մայիսյան բուրավետ վարդերով:

Բեմահարթակի վերածված դպրոցի բակում թախծախառն ուրախությամբ իրենց երախտիքի խոսքն էին ասում ուսումնառած եւ հասունության շեմին կանգնած թվով հինգ պատանի ու աղջիկ: Այդ օրը խորհրդանշական էր նրանց համար. երեկ աշակերտ էին, վաղն արդեն՝ ընդունելության քննությունների պատրաստվող ապագա ուսանողներ, մինչդեռ այսօր՝ շփոթված ու հուզված, իրարամերժ զգացումներով լի՝ երեխաներ:

«Վերջին զանգը» այս անգամ կարծես ավելի բարձր էր հնչում, չէ՞ որ հպարտանալու առիթ կար. շրջանավարտներից՝ Սիմոն Իոսիպովը, Մառնեուլիի մունիցիպալիտետում ավարտական քննություններից ամենաբարձր բալեր ստացող աշակերտներից մեկն էր:

Շրջանավարտների կողմից դպրոցի հայկական բաժնի ղեկավար Վանիկ Հարոսյանին ուղղված անկեղծ հարցին, թե «ախր, առանց մեզ ի՞նչ եք անելու», հնչեց հետեւյալ պատասխանը. «Ձեզ՝ բարի՜ երթ, սիրելի շրջանավարտներ, թող այն լույսի ջահը, որ գիտելիք է կոչվում, լուսավորի ձեր կյանքի ուղին: Իսկ ես, մանկավարժները խոստանում ենք, շարունակելու ենք կանգուն պահել հայկական կրթօջախը, եւ անսպառ եռանդով կրթել նոր սերունդներին»:

Ինչ վերաբերում է մեր մունիցիպալիտետի մյուս կրթօջախների շրջանավարտների եւ ապագա առաջին դասարանցիների թվին, ապա պատկերն այսպիսին է.

Կարմիր գյուղի հանրային դպրոցն ունի 6 շրջանավարտ եւ 12 առաջին դասարանցի, Դամիայի դպրոցը՝ 5 շրջանավարտ եւ 5 առաջին դասարանցի, Աղքյորփիի դպրոցը՝ 5 շրջանավարտ եւ 14 առաջին դասարանցի, Խոժոռնիի դպրոցը՝ 6 շրջանավարտ եւ 1 առաջին դասարանցի: Չանախչիի եւ Գյուլիբաղի դպրոցները այս տարի շրջանավարտներ չունեն, իսկ առաջին դասարանցիները 1 եւ 5-ն են:

ՆՈՆՆԱ ՀԱՐՈՍՅԱՆ
Մառնեուլիի մունիցիպալիտետի Ծերեթելիի հանրային դպրոցի Միրզոեւկայի հայկական բաժնի մաթեմատիկայի ուսուցչուհի

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ՇՈԿՈԼԱԴԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շոկոլադը կարելի՞ է համարել, արդյոք, դիետիկ սնունդ: Եվ, ընդհանրապես, որո՞նք են շոկոլադի օգտակար հատկությունները:

Ս.Վարդապետյան
Նինոծմինդա

Դանիացի, ամերիկացի եւ կանադացի մի խումբ գիտնականներ հայտնաբերել են, որ շոկոլադի չափավոր գործածումը նվազեցնում է սրտի այնպիսի լուրջ հիվանդության վտանգը, ինչպիսին է թրթռացող անռիթմությունը: Հետազոտության արդյունքները հրապարակված են «Heart» գիտական հանդեսում:

Բժիշկները հիմնվել են այն հարցման տվյալների վրա, որը մի քանի տարի առաջ կատարվել է դիետիկ սննդի վերաբերյալ: Դրան մասնակցել է ավելի քան 55 հազար դանիացի: Հարցման մասնակիցներին, մասնավորապես, խնդրել են պատասխանել, թե նրանք որքա՞ն շոկոլադ են կանոնավորապես գործածում:

Այնուհետեւ, գիտնականները տվյալները զուգադրել են գիտափորձին մասնակցողների հիվանդության պատմությունների հետ: Պարզվել է, որ, այլ բաներով հանդերձ, ինչպես կաթնային, այնպես էլ մուգ շոկոլադի չափավոր գործածումը նվազեցնում է թրթռացող անռիթմության զարգացման հավանականությունը, որով միլիոնավոր մարդիկ են տառապում ամբողջ աշխարհում:

Այսպես, այն կանանց մոտ, ովքեր կանոնավոր կերպով 30 գրամ շոկոլադ են ուտում՝ շաբաթական մեկ անգամ, հիվանդանալու վտանգը կրճատվում է 21 տոկոսով, մինչդեռ այն տղամարդկանց մոտ, ովքեր շաբաթական երկու-երեք նման չափաբաժին են ուտում՝ 23 տոկոսով, պարզել են հետազոտողները:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՈՐԱՁԵՎԵՐԸ

Նորածեւության հետքից կանանց վազքը մեջքի խնդիրներ է առաջացնում: Այսպիսի եզրակացության են հանգել իրոպրակտիկայի բրիտանական ասոցիացիայի մասնագետները, փոխանցում է The Independent-ը: Հետազոտության արդյունքներով պարզվել է, որ հարցման ենթարկված կանանց երրորդ մասը մեջքի խնդիրներ է ունեցել որոշակի հագուստի կամ կոշիկի պատճառով: Ըստ որում, կանանց 28 տոկոսը տեղյակ է, որ հագուստն ազդում է իր առողջության վրա, բայց, միեւնույն է, այն հագնում է:

Նեղ ջինսեր: Դրանք սահմանափակում են ոտքերի շարժունությունը՝ ստիպելով լարել մեջքի մկանները:

Բարձր կրունկներ: Դրանց պատճառով քայլն ավելի կարճ է դառնում, որի հետեւանքով մեծանում է գոտկատեղի հատվածի վրա ծանրաբեռնվածությունը: Վատթարանում է կոնքի հատվածին արյան մատակարարումը, եւ կարող են առաջանալ գինեկոլոգիայի հետ կապված խնդիրներ:

Բաց կրունկով կոշիկ (նաեւ՝ լայնացած կամ մեծ համարի կոշիկ): Կոշիկը պետք է կիպ նստի ոտքին՝ առավելագույնս նվազեցնելով նրա շարժունությունը: Երբ ոտքը շուռումուռ է գալիս, դա կարող է կուզիկության, սրունքի ձեւախեղման պատճառ դառնալ եւ նպաստել հարթաթաթության առաջացմանը:

Ծանր օձիքով վերարկու եւ եղջերվամուշտակ: Դրանք կաշկանդում են շարժումները՝ մեջքի վրա ոչ պիտանի բեռնվածություն ստեղծելով:

Ուսի վրայով անցկացված պայուսակ: Նույնը վերաբերում է նաեւ պայուսակներին, որոնք կանայք կրում են ուսին: Եթե ձեզ նման աքսեսուարը դուր է գալիս, ապա ջանացեք, որ այն առավելագույնս թեթեւ լինի:

Կատարված հետազոտության համաձայն, կանանց 73 տոկոսը տառապում է մեջքի ցավերով: Ըստ որում՝ 28 տոկոսը գիտի, որ հագուստով ու կեցվածքով է պայմանավորված մեջքի, պարանոցի ցավը: Մոտ 33 տոկոսը տեղյակ չէ այս փոխկապի մասին:

Հաստատվել է նաեւ, որ, կանանց մոտ 20 տոկոսը, ոտքի հետեւի մասը չպահող, առանց կրնկամասի կոշիկ է հագնում: 10 տոկոսն ընտրում է ծանր զարդեր (օրինակ՝ ծանր մանյակներ):

ՀՈՒՆԻՍԻ 1-Ը՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

ԳՈՒՆԱՎՈՐԵՆՔ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 1-ը նշանավորվում է ոչ միայն իբրեւ ամռան առաջին օր, այլեւ՝ երխաների պաշտպանության միջազգային օր: Այս տոնը ամենահին միջազգային տոներից մեկն է:

Երեխաների պաշտպանության միջազգային օրը սահմանվել է դեռեւս 1925 թվականին՝ Ժնեւում երեխաների պաշտպանության համար հրավիրված համաշխարհային կոնֆերանսի ընթացքում:

Երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող բազմաթիվ միջազգային փաստաթղթեր են ստորագրվել, որոնց թվում են 1959թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Երեխայի իրավունքների հռչակագիրն ու 1989թ. Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան, որով, ըստ էության, երեխաները համարվեցին հատուկ խոցելի խումբ:

1949թ. Կանանց ժողովրդավարական միջազգային դաշինքը երեխաների պաշտպանության օր անցկացնելու որոշում է ընդունել: ՄԱԿ-ը, հավանություն տալով այս նախաձեռնությանը՝ երեխաների կյանքի եւ առողջության պաշտպանության հարցը հայտարարեց իր գործունեության գերակա ուղղություններից մեկը:

Առաջին անգամ հունիսի մեկը նշվել է որպես Երեխաների պաշտպանության միջազգային օր 1950-ին. ինչո՞ւ հենց հունիսի մեկը՝ հայտնի չէ:

Վրաստանն ու Հայաստանը Երեխաների մասին կոնվենցիան վավերացրել են 1992 թ.-ին, որից հետո ընդունել «Երեխայի իրավունքների մասին» օրենքը:

Հունիսի 1-ը նշում են գրեթե բոլոր հետխորհրդային երկրները, վերջին տարիների այս տոնին նաեւ միացել են մի շարք եվրոպական երկրներ եւ ԱՄՆ մի շարք նահանգներ:

Այս օրվանից բացի, փոքրիկներին է նաեւ նվիրված Երեխաների համաշխարհային տոնը, որը նշվում է նոյեմբերի 20-ին:

Ամռան առաջին ամսին՝ իսկ ավելի ստույգ հունիսի 12-ին, նշվում է եւս մեկ այլ շատ կարեւոր օր՝ կապված երեխաների ծանր աշխատանքի դեմ պայքարի համաշխարհային օրվա հետ: Այսօր աշխարհում քիչ չեն դեպքերը, երբ երեխաները ենթարկվում են շահագործման, որը արտահայտվում է շատ տարբեր ձեւերով՝ տանը աշխատանքի միջոցով, փողոցում մուրացկանությամբ զբաղվելու հարկադրությամբ...

Ուստի, փորձենք երեխաների համար այս օրը տոն դարձնել, գունավորել նրանց մանկությունը, լցնել քաղաքը ուրախ ճիչերով ու ծիծաղով:

Չէ՞ որ, այսօրը եւ բոլորիս ապագան՝ երեխաներին են պատկանում:

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ 200 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ՝ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՁՈՒ

Աշխարհում շուրջ 250 միլիոն մարդ թմրանյութեր է գործածում՝ թեկուզ տարեկան մեկ անգամ, նրանց թվում՝ 30 միլիոնը մշտական թմրամոլներ են: Այս մասին հայտնել է ՄԱԿ-ի Թմրանյութերի եւ հանցավորության հարցերով զբաղվող վարչության գործադիր տնօրեն Յուրի Ֆեդոտովը:

«Այսօրվա դրությամբ, աշխարհում 250 միլիոն մարդ թմրանյութեր է գործածում, ներառյալ՝ նրանք, ովքեր դա անում են փորձի ձեւով՝ տարեկան մեկ անգամ: Այդ մարդկանցից 30 միլիոնը մտնում է խնդրահարույց կատեգորիայի մեջ, խոսքը նրանց մասին է, ովքեր տառապում են թմրակախվածությունից եւ ուղեկցող հիվանդություններից»,- մայիսի 18-ին նշել է նա՝ Սանկտ Պետերբուրգի միջազգային իրավաբանական համաժողովի շրջանակներում կայացած դասախոսության ժամանակ:

Ամեն տարի աշխարհում մինչեւ 200 հազար մարդ է մեռնում թմրանյութերից: 11,5 միլիոն մարդ թմրանյութեր գործածում է ներարկման եղանակով: Նրանց 52 տոկոսը վարակված է «C» հեպատիտով, 14 տոկոսը՝ ՄԻԱՎ-ով:

«Այս թվերի հետեւում միլիոնավոր մարդկանց եւ նրանց մերձավորների տառապանքներն են»,- նշել է ՄԱԿ-ի ներկայացուցիչը:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ



Ժամանակը մի անգամ է գալիսանցնում, եւ նա, ով ընթացակից չէ նորան, հետ է մնում:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
(1829-1866)
Հայ գրող, փիլիսոփա

Պիտի եղբայրն եղբոր համար
չխնայի ո՛չ կյանք, ո՛չ շունչ,
Սիրտը սրտին ընծա բերի, սերը դնի որպես կամուրջ:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(1172-1216)
Վրաց բանաստեղծ

Տգետ են լինում միայն նրանք, ովքեր վճռում են մնալ այդպիսին:

ՊԼԱՏՈՆ
(մ.թ.ա.427-մ.թ.ա.347)
Հույն փիլիսոփա

Ով լռել չի կարողանում, նա խոսելու էլ ընդունակ չէ:

ՍԵՆԵԿԱ
(մ.թ.ա.4-65)
Հռոմեացի փիլիսոփա

Մեծ խելքի դժբախտություններից մեկն էլ այն է, որ նա անխուսափելիորեն հասկանում է ամեն ինչ՝ ե՛ւ արատները, ե՛ւ առաքինությունները:

ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ
(1799-1850)
Ֆրանսիացի գրող

Արդարություն է որոնում՝ հույսը դրած գրչին ու թղթին: Բայց ոչ գրիչն է փող, ոչ՝ թուղթը, այս արդարությունը գնված է:

ՌԱՖԱՅԵԼ ՏԵՐ-ՍԱՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ - Պապան երեխեքին ասումա՝ վե՛րջ, էլ ձեզ չեմ սիրելու, դուք ինձ շան տեղ չեք դնում,

- Չէ, չէ, պապա, մենք քեզ շան տեղ դնում ենք:

☺ - Մամ, կանչեցի՞ր ինձ:

- Չէ:

- Պապ, կանչեցի՞ր ինձ:

- Չէ:

- Պապիկ, տատիկ, դուք կանչե՞լ եք:

- Չէ:

- Լաա՜վ, հարցը տանք այլ կերպ՝ մենք էսօր հաց ուտելո՞ւ ենք:

☺ Ամուսինը նստած թերթ է կարդում: Կինը, որն այդ ընթացքում բալկոնում էր գտնվում, բալկոնից գլուխն անց է կացնում սենյակ եւ՝ ասում ամուսնուն.

- Սիրելի՛ս, հիշո՞ւմ ես քո այն հին, մեծ բումերանգը, որը տարիներով կախված էր պատից: Այսօր վերջնականապես համբերությանս բաժակը լցվեց, եւ ես այն դուրս շպրտ...

☺ Ամերիկյան ընտանիք: Կինը զանգում է ամուսնուն.

- Սիրելի՛ս, շուտ տուն արի, քո երեխաները ծեծում են իմ երեխաներին, շուտով հերթը կհասնի մեր երեխաներին:

☺ Մեկը գնում է ընկերոջ տուն հյուր, նայում է առաստաղին ու ասում.

- Յաա, էս խիա ձեր պատալոկը սաղ արյուն,- ընկերն էլ թե.

- Հեչ, ուղղակի երեկ զոքանչիս ծնունդն էր, թոցնում էինք:

☺ Ամուսինը՝ կնոջը.

- Սիրելի՛ս, որտե՞ղ է մեր շաքարը, երկու ժամ է չեմ գտնում:

- Դու ընդհանրապես ոչինչ չես կարողանում գտնել: Զուգարանում ա, կոֆեի բանկայի մեջ, որի վրա «աղ» ա գրած:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵԱՀԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Մայիսի 30-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Լամբերտո Զանիերի հետ, ով Հայաստան էր ժամանել՝ քննարկելու Հայաստան-ԵԱՀԿ համագործակցությունը, շարունակելու հնարավորություններն ու հեռանկարները:

Հանդիպմանը Հայաստանի նախագահը ողջունեց հյուրին եւ բարձր գնահատեց՝ ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում Հայաստանի հետ նրա համագործակցությունը:

Գլխավոր քարտուղար Լամբերտո Զանիերն ափսոսանք հայտնեց՝ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի գործունեության մանդատի կասեցման կապակցությամբ՝ նշելով, որ կազմակերպությունը, այնուհանդերձ, պատրաստակամ է եւ շահագրգիռ՝ շարունակելու հետագա համագործակցությունը Հայաստանի հետ:

Զրուցակիցները քննարկեցին փոխգործակցությունն այլ ձեւաչափերով խորացնելու եւ ընդլայնելու հնարավորությունները:

Հանդիպման ժամանակ անդրադարձ եղավ նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացին:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Հայաստանում, վեցերորդ գումարման Ազգային ժողովի ընտրություններից հետո, շարունակվում է նոր կառավարության կազմավորման գործընթացը:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով՝ Դավիթ Տոնոյանը նշանակվել է Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարար, Հրաչյա Ռոստոմյանը՝ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար, Արմեն Ամիրյանը՝ մշակույթի նախարար, Լեւոն Ալթունյանը՝ առողջապահության նախարար, Դավիթ Լոքյանը՝ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար, Արծվիկ Մինասյանը՝ բնապահպանության նախարար, Արտեմ Ասատրյանը՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար, Լեւոն Մկրտչյանը՝ կրթության եւ գիտության նախարար:

ԿԱՅԱՑԵԼ Է «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 26-ՐԴ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԸ

Մայիսի 27-ին անցկացվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի եւ տեղական մարմինների 26-րդ համատեղ նիստը, որը վարել է խորհրդի նախագահ, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Սերժ Սարգսյանը ներկաներին շնորհավորեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի 25-րդ տարեդարձի կապակցությամբ՝ այն նշանակալի հոբելյան համարելով Հայաստան-Արցախ-սփյուռք եռամիասնության համատեքստում:

Օրակարգի շրջանակներում՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը ներկայացրեց 2016թ. կատարված աշխատանքների վերաբերյալ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության հաշվետվությունը:

Նիստում քննարկված հաջորդ հարցը՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Մարաթոն-2017»-ի նպատակաուղղվածության մասին, զեկուցեց Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը:

«ԱՎՐՈՐԱ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻՆ

«Ավրորա» մրցանակի երկրորդ դափնեկիրը Թոմ Քաթինան է, կաթոլիկ միսիոները, ով տարեկան մոտ 1000 վիրահատություն է կատարում՝ սպասարկելով օրական ավելի քան 400 հիվանդի: Մարդասիրական մրցանակի դափնեկրի անունը պաշտոնական միջոցառմանը հայտարարեց աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրը:

Երեւանի Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, մայիսի 28-ին, հանդիսավոր կերպով մեկնարկեց «Ավրորա» մրցանակաբաշխությունը: Տոնական միջոցառմանը ներկա էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության հիմնադիրներ Վարդան Գրիգորյանը, Նուբար Աֆեյանը, Ռուբեն Վարդանյանը, աշխարհահռչակ երգահան եւ շանսոնյե Շառլ Ազնավուրը, «Ավրորա 2017» մրցանակի հավակնորդները եւ հյուրեր:

«Ավրորա» մրցանակը շնորհվում է Հայոց ցեղասպանությունը վերապրածների անունից եւ ի երախտագիտություն նրանց, ովքեր փրկության ձեռք մեկնեցին հայ ժողովրդին: Դափնեկիրն ստանալու է 100.000 ԱՄՆ դոլարի պարգեւ, եւ նվիրատվության շրջան շարունակելու հնարավորություն՝ 1.000.000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհի ներկայացնելով իրեն ոգեշնչած մարդասիրական կազմակերպություններին:

«ՔԵԶ ՀԱՄԱՐ, ԱԶՆԱՎՈՒՐ»՝ ՀԱՄԵՐԳ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հունիսի մեկին, Երեւանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում, տեղի ունեցավ հանրահայտ շանսոնյե, գրող, դերասան Շառլ Ազնավուրին նվիրված «Քեզ համար, Ազնավո'ւր» խորագրով համերգ:

Համերգային ծրագրում ելույթ ունեցան Սոնա Ռուբենյանը, Անդրեն, Արամոն, Էմմա Պետրոսյանը, Հայկ Տիգրանյանը, Սարգիս Աղամալյանը, Գեւորգ Հակոբյանը եւ այլք: Վերջում բոլոր մասնակիցները կատարեցին «Քեզ համար, Հայաստա'ն» երգը:

Համերգին ներկա էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ Շառլ Ազնավուրը, որին հանդիսատեսը հոտնկայս ու բուռն ծափողջյուններով ողջունեց:

Նշենք, որ Շառլ Ազնավուրը գրել է 1000-ից ավելի երգեր: Նրա երգերի սկավառակները թողարկվել են միլիոնավոր օրինակներով, բանաստեղծությունները թարգմանվել եւ լույս են տեսել առանձին գրքերով: Նա իր երգերի լավագույն կատարողն է: Ազնավուրը երգել է Լուչանո Պավարոտիի, Պլաչիդո Դոմինգոյի, Լայզա Մինելիի, Միրեյ Մաթյոյի, Պատրիսիա Կասի հետ: Դստեր՝ Սեդայի հետ կատարել է Սայաթ-Նովայի «Աշխարհումս» երգը: Գրել է նաեւ օպերետային երաժշտություն:

Ազնավուրը նկարահանվել է 60-ից ավելի կինոնկարներում: Ուշագրավ է նրա դերակատարումը Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմում, որը նվիրված է Հայոց ցեղասպանությանը:

1995 թվականից ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով պատվավոր դեսպանն է, ՅՈՒՆԵՍԿՕ-ում Հայաստանի մշտական պատվիրակ: 2009-ին նշանակվել է ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Շվեյցարիայում:

Արժանացել է Հայաստանի ազգային հերոսի կոչման, պարգեւատրվել ԼՂՀ «Գրիգոր Լուսավորիչ» եւ Թեքեյան մշակութային միության ադամանդակուռ «Արարատ» շքանշաններով, Ֆրանսիայի Պատվո լեգեոնի 2 շքանշանով: 2009-ին ճանաչվել է XX դարի լավագույն երգիչ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏՈՆՈՒՄ Է ԵՎՐՈՊԱՅԻ ՕՐԸ

Հայաստանը տոնում է Եվրոպայի օրը: «Եվրոպական միությունը Հայաստանի համար» խորագիրը կրող ամենամյա միջոցառումներում ներկայացվում են Հայաստանում ԵՄ կողմից իրականացվող բազմաթիվ ծրագրեր, որոնք թիրախավորում են Հայաստանի բոլոր մարզերի համաչափ զարգացումը տարբեր ոլորտներում: «Այսօր Եվրոպայի օրերի ծրագրի ավարտն է: Մենք մեծ շրջան արեցինք, ճամփորդեցինք ամբողջ Հայաստանով՝ Վանաձոր, Գյումրի, Կապան, Գորիս, Եղեգնաձոր եւ վերադարձանք Երեւան»,- լրագրողների հետ ճեպազրույցում այս մասին ասաց Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին:

Նրա խոսքով՝ Հայաստանը ընդլայնված եվրոպական ընտանիքի անդամ է: «Մենք կցանկանայինք, որպեսզի հայերը քաջատեղյակ լինեին, թե ինչ է անում Եվրամիությունն այստեղ: Եվրամիությունն ամենամեծ դոնորն է եւ զարգացման ծրագրերի ամենամեծ աջակիցը»,- հավելեց ԵՄ դեսպանը:

ՆԱՏՕ-Ի ՀԵՏ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Առաջիկա երկու ամիսների ընթացքում Հայաստանը ՆԱՏՕ-ի հետ կստեղծի Վստահության հիմնադրամ:

Հիմնադրամի շրջանակներում նախատեսվում է իրականացնել երկու ծրագիր: Առաջին ծրագրով նախատեսվում է՝ ոչ պիտանի շուրջ 130 զրահամեքենաների ոչնչացում: Դրանք կոչնչացվեն ՆԱՏՕ-ի շրջանակներում. դրա համար նախատեսվել է 1.3 մլն եվրոյի ներդրավում:

Երկրորդ մասը վերաբերում է մարդասիրական ականազերծմանը եւ սահմանամերձ համայնքներում մարդկանց իրազեկության մեթոդների կատարելագործմանը: 892742

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

2017 թվականի մայիսի առաջին 29 օրում Սեւանա լճի մակարդակը բարձրացել է մոտ 16 սանտիմետրով: Հայաստանի ԱԻՆ «Հայհիդրոմետ» ծառայությունը տեղեկացրեց, որ, 2017 թվականի մայիսի 29-ի դրությամբ, Սեւանա լիճը ծովի մակարդակից գտնվել է 1900 մետր 87 սանտիմետր բարձրության վրա, ինչը 22 սանտիմետրով բարձր է մնում նախորդ տարվա նույն օրվա նիշից: Նույն աղբյուրի համաձայն, 2017 թվականի մայիսի 2-29-ն ընկած ժամանակահատվածում, Սեւանա լճի մակարդակը 1900 մետր 71 սանտիմետր նիշից բարձրացել է մինչեւ 1900 մետր 87 սանտիմետր նիշը:

Արփա-Սեւան թունելային ջրատարով, այս տարվա ընթացքում, Սեւանա լիճ է տեղափոխվել 58 միլիոն 660 հազար խորանարդ մետր ջուր: Սեւանա լճից բաց է թողնվել 11 միլիոն 733 հազար խորանարդ մետր ջուր: 893007

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(2 հունիսի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԳՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	480,70	483,20
ԵՎՐՈ	537,00	545,00
ՌՈՒԲԼԻ	8,42	8,60

Մայիսի 26-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը ավելացել է 0,7 դրամով:

ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

«ՎՐԱՑԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ» ԱՆԹՈԼՈԳԻԱՆ՝ ԳԱԳԻԿ ԴԱՎԹՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ



«Ես սիրում եմ ձեզ»,- այս խոսքերով իր վրաց գործընկերներին դիմեց հայ ճանաչված բանաստեղծ Գագիկ Դավթյանը՝ Թբիլիսիի «Հայարտուն» մշակութային կենտրոնում կայացած հանդիպման ժամանակ: Այցը նվիրված էր նրա ծննդյան 70-ամյա հոբելյանին:

Հոբելյարին շնորհավորելու էին եկել վրաց բանաստեղծներ, ում հետ Գագիկ Դավթյանը կապված է ոչ միայն ստեղծագործական, այլեւ բարեկամական ամուր կապերով:

Բանաստեղծն իր հետ բերեց Երեւանի «Արմավ» հրատարակության կողմից լույս ընծայած «Վրացական պոեզիայի» անթոլոգիա հայերեն գիրքը, որը բովանդակում է լայն ճանաչման արժանացած վրաց հայտնի 34 բանաստեղծների գործերը: Աննա Կալանդաձե, Մուխրան Մաճավարիանի, Մորիս Փոցխիշվիլի, Ջանսուղ Չարկվիանի, Մաղվալա Գոնաշվիլի, Բեսիկ Խարանաուլի, Գենո Կալանդիա, Բաղաթեր Արաբուլի, Գուրամ Օդիշարիա, Դավիթ Շեմոքմեդելի...

Շնորհադեսին, որին ներկա էին նաեւ վրաց բանաստեղծներ, ողջույնի խոսքեր ուղղեցին իրենց հայ գործընկերոջը: Նշեցին նրա վիթխարի դերը հայ-վրացական գրական կապերի ամրապնդման գործում: Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին երախտագիտությամբ նշեց հայ բանաստեղծի շնորհակալ գործունեությունը, Բաղաթեր Արաբուլին պատմեց, թե ինչպես է 35 տարի առաջ, երբ երկուսով միասին արժանացան Մայակովսկու անվան գրական մրցանակի, ծանոթացել Գագիկ Դավթյանի հետ եւ իրենց բարեկամական փոխհարաբերությունները շարունակվում են նույն ջերմությամբ: Գուրամ Օդիշարիան հոբելյարին փոխանցեց իրենց վաղեմի բարեկամական հարաբերությունները խորհրդանշող հուշանվեր: Թարգմանիչ Գիվի Շահնազարը, բանաստեղծներ Դավիթ Շեմոքմեդելին, Բադրի Քութաթելաձեն, Գարրի Կալմակարովը, Վրաստանի վաստակավոր դերասան Ռոբերտ Հովհաննիսյանն իրենց ելույթներում ջերմորեն շնորհավորեցին հոբելյարին, խոսեցին նրա հետ փոխհարաբերությունների պայծառ դրվագների մասին: «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը պատմեց այն մասին, թե ինչպես հանճարեղ Պարույր Սեւակը ժամանակին հանձինս պատանի Գագիկի, տեսավ բանաստեղծի մեծ ապագան: Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն ընդգծեց Վրաստանի եւ Հայաստանի գրողների միությունների կարեւորագույն առաքելությունը՝ նշելով, որ նրանք շատ ավելի նշանակալի ավանդ են ներդնում հայ-վրացական կապերի ամրապնդման գործում:

Իր շնորհակալական խոսքում հայ բանաստեղծը հպարտությամբ նշեց, որ ինքն առաջինն է, որ դարձել է Վրաստանի գրողների միության պատվավոր անդամը եւ առաջինը ժամանակակից հայ ստեղծագործողների թվում, ում հոբելյանը նշվեց Վրաստանում, Դ.Գուրամիշվիլու, Ի.Մաչաբելու, Գ.Տաբիձեի անվան հեղինակային մրցանակների առաջին դափնեկիրը: Ներկաներից շատերը՝ որպես նվեր ստացան վրաց բանաստեղծների հայերեն թարգմանության ձեռնարկները:

ԱՐՏՅՈՄ ԿԻՐԱԿՈԶՈՎ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒՆԻՍ

4.06.2017. Հոգեգալուստ (Պենտեկոստե)

Առաքյալների վրա Սուրբ Հոգու իջման հիշատակության Տոնն է, որ տեղի է ունեցել Սուրբ Հարության հիսուներորդ օրը: Այդ պատճառով էլ Հոգեգալուստը միշտ տոնում են Զատիկից հիսուն օր հետո: Սբ. Հոգին Սբ. Երրորդության երեք անձերից մեկն է, համագո եւ հավասար Հորը եւ Որդուն:

Հայ Առաքելական եկեղեցու կողմից սահմանված տարվա չորս եղանակի պահքերից՝ սա ամառնամուտի շաբաթապահքն է: Ինչպես մյուս եղանակների պահքերը, եղիական պահքը եւս եկեղեցական որեւէ տոնի պատրաստություն չէ:

ՍՊՈՐՏ

ՌԵԳԲԻԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 31-ին, Թբիլիսիում եւ Քութայիսիում մեկնարկեց ռեգբիի մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունը: Երիտասարդական, հոբելյանական տասներորդ առաջնությունն անցկացվում է՝ «Համաշխարհային ռեգբիի ապագա աստղեր» կարգախոսով: Մրցաշարին, Վրաստանի հավաքականից բացի, մասնակցում են եւս 11 թիմեր՝ Անգլիայի, Իռլանդիայի, Արգենտինայի, Հարավային Աֆրիկայի, Նոր Զելանդիայի, Ավստրալիայի, Ուելսի, Շոտլանդիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Սամուայի հավաքականները: Թիմերը բաժանված են երեք խմբերի:

Խմբային մրցումները անցկացվում են մայիսի 31-ին, հունիսի 4-ին եւ 8-ին: Երկու կիսաեզրափակիչները կանցկացվեն հունիսի 14-ին, իսկ երրորդ տեղի համար հանդիպումը եւ եզրափակիչը՝ հունիսի 18-ին:

Առաջին փուլում, Վրաստանի հավաքականը՝ 26-37 հաշվով զիջեց Արգենտինայի թիմին: Ներկայացնում ենք մյուս հանդիպումների արդյունքները՝ Անգլիա-Սամոա - 74-17, Նոր Զելանդիա-Շոտլանդիա - 42-20, Հարավային Աֆրիկա-Ֆրանսիա- 23-23, Իռլանդիա-Իտալիա - 21-22, Ավստրալիա-Ուելս - 24-17:

ՍԱՄԲՈ. ԻՆԸ ՄԵԴԱԼ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԹ ՄԵԴԱԼ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒՄ

Մինսկում եզրագիծը հատեց՝ սամբոյի մարզաձեւում Եվրոպայի առաջնությունը: Վրաստանի հավաքականն իր ակտիվում գրանցեց ինը (երկու՝ ոսկե, երեք՝ արծաթե եւ չորս՝ բրոնզե) տարբեր արժողության մեդալներ: Մայրցամաքի չեմպիոններ դարձան Նինո Օձելաշվիլին (72կգ քաշային կարգ), Լեւան Նախուրցիշվիլին (74կգ), հաղթողների պատվանդանին տեղ զբաղեցրին Վախթանգ Չիդրաշվիլին, Պաատա Գվինիաշվիլին (արծաթ), Ելենա Կոբաձեն, Զվիադ Օդոշաշվիլին, Բեքա Բերձենիշվիլին, Լեւան Բերերաշվիլին, Նիկո Կուցիան (82կգ) (բրոնզ): Հայաստանի հավաքականն իր ակտիվում գրանցեց մեկ ոսկե, երկու արծաթե եւ հինգ բրոնզե մեդալներ՝ ընդհանուրը ութ մեդալ: Եվրոպայի չեմպիոնի կոչման արժանացավ Տիգրան Կիրակոսյանը (52կգ): Պատվանդանի երկրորդ հորիզոնականը զբաղեցրին Գրիգոր Մխիթարյանը (52կգ) եւ Արթուր Սահակյանը (62կգ): Բրոնզե մեդալակիրներ դարձան Հարություն Սարգսյանը (57կգ), Կոլյա Կարապետյանը (62կգ), Մաքսիմ Մանուկյանը (57կգ), Արսեն Ղազարյանը (74կգ) եւ Էդգար Մեհրաբյանը (90կգ)...

Թբիլիսիի «Հայկական գիտահետազոտական կենտրոն Վրաստանում ՀԿ», «Վրաստան» թերթի խմբագրությունը խոր վշտով հայտնում են 1980-ական թթ. Պուշկինի անվան ինստիտուտի Հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արտաշես Մխիթարյանի դստեր մահը եւ ցավակցում են նրա որդուն, բժշկական գիտությունների դոկտոր Կարեն Մխիթարյանին, նրա սիրելի քրոջ՝

Կարինե Արտաշեսի ՄԽԻԹԱՐՅԱՆԻ

մահվան կապակցությամբ:

Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալա գյուղի հանրային հայկական դպրոցի մակավարժական կոլեկտիվը խորին ցավակցություն է հայտնում դպրոցի տնօրեն Նելլի Դուդուկչյանին՝ նրա սիրելի մորաքրոջ տղայի՝

Մեր Դավիթի ՂՈՒԿԱՍՅԱՆԻ

անժամանակ մահվան կապակցությամբ:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Խորհրդային եւ ռուս դերասան Վյաչեսլավ ...: 9.Բնագավառ: 10.Կինոնկար: 11.Լանջաբաց: 13.Վրաց բանաստեղծ ... Չիքովանի: 16.Քաղաք Ֆրանսիայում: 17.Մշակելի հող: 19.Շոկոլադ «...-Վեյ»: 22.Օգնություն, օժանդակություն: 24.Հայազգի ջազային երգչուհի ... Հովհաննիսյան: 25.Կղզի Ինդոնեզիայում: 27.Պարկարագիլ: 29.Ֆրանսիացի նշանավոր դերասանուհի Սառա ...: 32.Սահմանված քանակից շատ: 33.Արեւելյան ծագում ունեցող հնագույն հարվածային, երաժշտական գործիք: 35.Շատ աղքատ, ցնցոտիավոր: 38.Կաշվից, մորթուց հագուստեղեն կարող արհեստավոր: 40.Երկիր արեւմտյան Աֆրիկայում ...-Լեոնե: 41.Ալյուրոտ քաղցր պտուղ: 44.Ա.Դյումայի «Հրացանակիրներից»: 47.Հովանոցավորների ընտանիքին պատկանող բույս: 48.Հատիկավոր բույս: 50.... ընդ ատաման: 51.Հարավային Ամերիկայի արշիպելագ, որի կազմի մեջ ներառվում է ավելի քան 40 հազար կղզի, ... երկիր: 52.Մարմնի մաս: 53.Կինոյի եւ թատրոնի հնդիկ դերասան ... Կապուր: 54.«Եմ» օժանդակ բայի ժխտական ձեւը: 55.Մետաղալարից հյուսված ցանցավոր զրահաշապիկ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Տեղյակ եմ: 2.Գնդասեղ: 3.Կանացի կարճ բաճկոնակ: 4.Քաղաք Սիրիայում: 5.Մթնոլորտային տեղումներով զուգորդվող ուժեղ քամի: Մրրիկ: 6.Ժամանակ (արեւմտ.): 8.Իտալացի նախկին ֆուտբոլիստ Քրիստիան ...: 12.Անպետք իրերի թափթփուկ, անմաքրություն: 14.Հայ գուսան: 15.Թանկարժեք մետաղ: 18.Ծովախեցգետին: 19.Թելի վերածել, հյուսել, ոլորել: 20.Օդիշի (Սամեգրելո) իշխան ... II Դադիանի: 21.Իսպանացի ֆուտբոլիստ, դարպասապահ ... Կասիլյաս: 23.Գետ Ռուսաստանում: 26.Ֆրանսիայի ամենաերկար գետը: 28.Որսի միս: 29.Բաբելոնյան գերագույն աստված, Բաբելոն քաղաքի հովանին: 30.Իտալական ծագումով ամերիկացի վիրտուոզ ջութակահար Ռուջերո ...: 31.Ճաշատեսակ: 34.Ճապոնական ավտոմեքենա: 36.Վրացական մարզական թերթ: 37.Խոշոր եղջերավոր կենդանիների վարակիչ հիվանդություն: 39.Սիրելի անձ: 42.Ներշնչվող ու արտաշնչվող օդը: 43.Ցեղ, սերունդ: 45.Նվագարան: 46.Վրան լավաշ թխելու թիթեղ: 48.Քաղցի զգացում: 49.«Ինքը» դերանվան հնաձեւ սեռական հոլովը:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ռաբաթ: 4.Ջիմզիմով: 11.Արիա: 12.Եգոր: 13.Նա: 14.Խորին: 15.Գալ: 18.Գորի: 19.Մորի: 21.Թավրիզ: 23.Նկուղ: 25.Աջիկա: 26.Պարարտ: 30.Ամպեր: 33.Ժաննա: 35.Մառ: 36.Անհոյ: 37.Երկ: 38.Ռե: 40.Լաչին: 44.Մինաս: 47.Հասկեր: 48.Կումիս: 50.Արաց: 51.Կտավ: 52.Սեդա: 54.Նունե: 55.Նարգիզ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Ատոմ: 3.Թորոս: 4.Ջանի: 5.Իրան: 6.Մի: 7.Զարդ: 8.Մարգո: 9.Վաֆլի: 10.Գեղամ: 16.Արդար: 17.Ցինկ: 18.Գզիր: 20.Որջ: 21.Թղթամոլ: 22.Ռոպե: 24.Կապան: 25.Ալժիր: 27.Արմենակ: 28.Անդեր: 29.Տուրկու: 31.Մայամի: 32.Պո: 34.Նարեկացի: 39.Եվա: 41.Չի: 42.Ին: 43.Իրական: 45.Սուրեն: 46.Սիփան: 47.Հրանտ: 49.Ավագ: 53.Դուք:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445